


## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ



**ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ**

ԳՐ. ՆԱՐԵԿԱՑԻՈՑ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱԱ. ՑԵԶ

(Հար. տիս 1917 թգմ. էջ 347)

### 10. Երամակ

Նարեկի կթ զլիուն մէջ այսպիսի հասուած մը կայ. «Քանզի խաղալն ինքնարեական զիւտը որովայնի՝ բոտուց ճապուկը շարժողականը և ազդի ազգիք, որդունց աղեաց զաղունակուրը, խաղաւարուց հրակայծակը և թիծը բոցակիծը և անիծը անկերպաւորք և երամակը ու մանը բրտնածինը զազրաթորմիք կոկծեցիչը և մարմաղողականը» (էջ 177):

Այս հատուածին մէջ երամակ բառը մեզ ծանօթ նշանակութեամբ շատ անյարմար կու գայ. բայց բառարանները և մեկնիչները սար վրայ, որչափ գիտեմ, ու շաղրութիւն դարձուցած չեն: Պօլսի 1850 թուի Նարեկի տպագրութեան բառացանկին մէջ (էջ 365) երամակ զրուած է միայն իր սովորական նշանակութեամբ: Հ. Գ. Աւետիքսանի Նարեկի մեկնութեան մէջ (Վենետ. 1859, էջ 352) երամակը մեմաք անորոշարար կը մեխուփ «բազմութիւնը ոջլոց, որք յաղուց բրտանց ծնանին», ուր երամակ անշուշտ «բազմութիւն» իմաստով առնուած է:

Ըստ իս երամակ բրլորովին նոր բառ մընէ: Խնչ կրնայ ըլլալ ասոր նշանակութիւնը:

Հասուածին մէջ երկու տեսակ նիւթերու մասին կը խօսուի, առաջին՝ աղտոտ անամիկներու մասին (բոտուց, որդունց

և անիծը) և երկրորդ՝ մարմիկ բշտիկներու մասին (խաղաւարուց և թիծը): Երամակն ալ այս երկուցէն մէկը պիտի ըլլայ: Բառիս տրուած են չորս ածական, որոնք նշանակուած առարկային յատկութիւնները կ'որոշեն. քրտնածին (քրտինցէ յառաջ եկած), զազրարորմի (զարշելի), կոփեցոցիչը և մարմաղողական (եռք տուող, քոր ածող): Դժբախտարար չորսն ալ կրնան յարմարի թէ՛ առաջին և թէ՛ երկրորդ կարգին, այսինքն թէ՛ մարմիկ վրայ ածող որ և է մակարոյցի և թէ՛ մարմիկ վրայ յառաջացած բշտիկի (յատկապէս քրտինցիաշ). որով բառին նշանակութիւնը որոշ շելու համար առանձին օգուտ մը չեն տար:

Բայց երամակ գործածուած է անիծ բառէն անմիջապէս յետոյ, որով բաւական առիթ կայ կարծելու թէ երամակն ալ անամիկ մը ըլլալու է և յատկապէս անիծին մերձաւորը՝ «ողիլ»: Երամակ բառէն յետոյ ալ զրուած է մամեկ, որ շընչաւրներու համար գործածուած անորոշ ածական մը ըլլալով՝ չի թողուը կարծել թէ խօսքը մարմիկ բշտիկներու մասին է և ուղղակի կը հաստատէ մեր ենթաղրած «ողիլ» նշանակութիւնը:

### 11. Մայնակ

Անդէն ի նմին ազգային և բնաբնակ լեռնահոլով (կարդա ինհայրով, այսինքն «լեռնաշատ») և կարծրախարիսխ զաւառին Մոկաց մայեկաց մրգաց, ի տեղի հանգստեան... (Նար. իշ. էջ 380):

Թուիք թէ՛ կը նշանակէ «շտեմարան, բանի մը շատ գտնուած տեղը»:

## 12. ՅԱՆԴԱԼՎԱՆԻԵԱԼ

Զի եթէ յիմար և մորոս ասել եղօրօն՝  
ըստ Տիեան բանին պարտաւոր առնէ գե-  
հենին, ո՞չ ասի ևս առաւել զանհնարդին և  
զդժնակ ամենայն լսելութեան՝ անարգա-  
նաց և նախատանաց բանսն որպէս ի դժո-  
լոց յահականեայ (տպ. Պօլոյ՝ յարար-  
կանել, յարգականել) մտացն և ի լեզոյն  
զգայշելով (Նար. Խր. Էջ 521-2):

Կը հասկնամ «նմանեալ, նման»։ Կազ-  
մուած է յանեց «նման» բառէն՝ ական մաս-  
նիկով, որուն վրայ աւելցած է յետոյ  
դերբայի եւալ մասնիկը։ Ի դժոխոց յահ-  
ականեալ մտացն կը նշանակէ «ի դժո-  
խանան մտացն, դժոխի նմանուած մրտ-  
քէն» (ի նախդիրը անելով մտացն բա-  
րին հետ)։

## 13. ՆԵՇՆԵՄ

Յունիցն նրբնից ի մի կից կամար,  
Նեճնմ թէ նեճնմ մէջօքի ժամն։  
(Նար. առ. 465)

Նշանակութիւնը բոլորովին անյայտ է։

## 14. ՆԵԿԱԲԻՆԻ

Հեռացո՛ զանհանդէպ մտածութիւնն...  
զհեսս վրիպելիս, զպատիրս ձաղելիս,  
զիորիուրզս անգոսնելիս, զաւելարանու-  
թիւնս նշկահելիս (Նար. զա. Էջ 238):

Կը նշանակէ «անգոսնելի, արհամար-  
չելի»։ Մոռացմամբ նշանակուած չէ ոչ  
Հայկազեանի և ոչ ալ լլուենի մէջ։

## 15. ՆՈՑԼԻԱՆԱՊԼԱՎԱՒ

Ոչ ի ձեռն բոււսց արգաւանդարել սա-  
դարթի, ի բնակութիւնէ հողակոյս բլրյն  
Բասանու և կամ բարձրաբերձ մայրիւր  
սանայիրասերմ ծառոցն, և կամ թէ զիւլզս  
ստեղնաձիզս նոճիանաճարին անտառաց  
ի մէջ առեալ բանիս երգութիւն (Նար.  
Խր. Էջ 394):

Նարեկացան Մատենագրութեանց հրա-  
տարակիչը թէկ ձեռագրական տարբերու-  
թիւններ չէ նշանակած, բայց վենեսկեան  
ուրիշ ձեռագրի մը մէջ ըլլալու էր ան-

շուշտ նոհիաձան ձոյին ամսաւաց ընթեր-  
ցուածը, որ աչքի առջև ունենալով նշիք  
(որմէ նաև Ա.Բ.) կը գնեն նոհիաձան «նո-  
նիով զարդարուած» (Հանելով ձահ «պատ-  
շաճ, յարմար» արմուտիչ)։ Նոր հոհատա-  
րակիչները կ'երկայ թէ աւելի լաւ ձե-  
ռագրի մը մէջ գտեր են նոհիաձանափ-  
փակ ։ Ասիկան կ'երկայ թէ կազմուած է  
ձադամակիր բառէն, որ իբրև ձապայիք բա-  
ռին տարբերակը գործածուած է։ ասով  
նոհիաձանափակ կը ստանայ «մէջը նոճիներ  
տարածուած, նոճիներ սփռուած, նոճա-  
շատ» Նշանակութիւնը։

## 16. ՍԱԹԵԼԵՐՈՒԱԿԻ

Յայտէն նոնենի սարդիատունկ  
Գեղաշիխուակ ծայրից ծաղկանց。  
Որոյ սիւնն ի սրբին նուսիայօրէն  
Կարկաջալը սաթրերունի սէր։  
(Նար. առ. 465)

Ասք «բուստ, մէրճան» բառէն բար-  
դուած մե մ'է, որ իբր ածական գործա-  
ծուած է սէր բառին. «մէրճանի պէս ծլած,  
ձաղկած»։

## 17. ԱՍՈՒԻ

Զեռացն եղիշոյ կամարակապ կապէր,  
Ասիճաղ պատիճաղ, ստղի խտղի երգով։  
(Նար. առ. Էջ 465)

Այս բաւական մութ երկոսորդին մէջ  
պարզ է միայն որ ստղի և խտղի երգին  
ածականներն են. Նշիք երկուցն չի յշեեր.  
Առա. Բառ. Կը յիշէ միայն խտղի, որ և  
կը մենէն «ախորժելի, հեշտալի»։ Եթէ  
այսպէս է ստղի բառն ալ կընանց թերես  
հասկնալ իբր ստղի «ծանր եղանակով  
գեղգեղեալ»։

## 18. ՏԱՐՐԱՋԻ

Վկայութիւնը տես աս բառին տակ,  
որուն հետ հաւասար անծանօթ բառ մ'է։

## 19. ՓԱԾԼԻՈՒՆ

Եւ շօշափելիք զազգի ազգի նիւթոցն  
զանազանութիւն շօշափելովն զգայ և ըն-  
տրէ ի միմեանց զխոշորագոյնն և զու-

զորկան, զընդդիմատիպսն և զփաղփունն  
(Նար. իր. էջ 506):

Փաղփուն սովորաբար կը նշանակէ  
«փայլուն», բայց որովհետեւ հոս շօշա-  
փելիքով զգալի յատկութեանց մասին է  
խօսքը (փայլունը աշքով կրնայ որոշուիլ),  
միւս կողմէ որովհետեւ ընդդիմատիպ «պինդ,  
կարծր» բառին հետ հակադրութիւն մը  
կայ, ուստի պէտք է ենթադրել որ փաղ-  
փուն հոս կը նշանակէ «փափուկ, կա-  
կուզ»: Այսպիսի իմաստով կրնայ զործա-

ծուած ըլլալ նաև Փիլ. Ամմիս, «կանա-  
ցի դէմք փաղփուն»:

20. Գատաղեան

Եւ յայն ցառադեան գետըն վտակ բիե-  
նայր,

Հոսէր իջանէր անդր ի ծովն առաջին,  
(Նար. առաջ. էջ 480)

Տպագրական կամ ձեռագրական սիւալ  
մ'է. պէտք է կարզալ քառադեան, այն է  
բառական «չորեցալեան, չորս ալիքով»:  
Նար.

Հ. Աձննենեան



ՏՈՆԱԴՅԱԼՈՅ. — «ՊԱՐՈՊ, ՄԱՆՈՒԿԻՆ ԵՐԼ»